# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

# Ո Ր Ո Շ Ու Մ

## ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ ՆԱԽԱՁԵՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետով և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6–րդ հոդվածի առաջին մասի 6–րդ կետի ա ենթակետի պահանջները Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության որոշեց.

«Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ին ներառել գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ «Էլլիպս Ջի Էյ» ՍՊԸ-ին տրվել է նախազգուշացումներ՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունները պատշաճ կերպով կատարելու վերաբերյալ, ինչպես նաև տրվել է ողջամիտ /5 օր/ ժամկետ թերությունները վերացնելու համար, սակայն կազմակերպությունը մինչև օրս պարտավորությունները չի իրականացրել պատշաճ և չկատարման վերաբերյալ չի ներկայացրել որևէ պարզաբանում:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ ՀՀ ներքին գործերի նախարարությունը 02.08.2024 թվականին միակողմանի ամբողջությամբ լուծել է պայմանագիրը:

**Պատվիրատուի ղեկավար՝**

**Ա. Ֆիդանյան**

« 05 » « 08 » 2024թ.

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ /ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեությա ն հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մա պատվիրատո ղեկավարի կայացրած որո ամսաթիվը և գ ընթացակարգ ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ | 00067177 | ՀՀ, ք. Երևան, Ն. Տիգրանյան 27 | | «ՀՀ Ո ԵՄԾՁԲ-2020-ԲՋՋ-54»ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Էլլիպս Ջիէյ» ՍՊԸ-ն չի կատարվել պայմանագրով ստանձնած պայմանագրային պարտավորությունները, վերջինիս կողմից խախտվել են ծառայությունների մատուցման ժամկետները: | | «ՀՀ Ո ԵՄԾՁ 2020-ԲՋՋ-5 ծածկագրո պայմանագ Պատվիրատո ղեկավարի «05»«08»202 որոշման համա |